

ՀՏԴ : 008(479.25+40)

DOI: 10.54503/0135-0536-2026.2-301

«ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ»
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ*

Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում ապրիլի 17-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Հայ-ֆրանսիական մշակութային կապերի պատմությունից» միջազգային գիտական առաջին կոնֆերանսը, որը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը:

Իր բացման խոսում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, արվ. դ., պրոֆ. *Աննա Ասատրյանը* նշեց, որ թեև 2010 թվականից Հայաստանում անց են կացվում Ֆրանկոֆոնիայի օրեր, որի շրջանակում տեղի են ունենում տարաբնույթ միջոցառումներ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն այս տարի առաջին անգամ միացավ Ֆրանկոֆոնիայի օրերին՝ գիտական միջոցառման ձևաչափով:

Ու քանի որ հայ-ֆրանսիական մշակութային բազմադարյա և հարուստ առնչություններն անհնար է բացահայտել մեկ գիտական կոնֆերանսի շրջանակներում, հետևաբար որոշվել էր կազմակերպել հայ-ֆրանսիական մշակութային առնչությունների ուսումնասիրությանը նվիրված միջազգային գիտական կոնֆերանսների շարք, որի մեկնարկը տրվեց այս տարի: Այդ կոնֆերանսները այսուհետ կգումարվեն ամեն տարի ապրիլ ամսին՝ Հայաստանի Հանրապետությունում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում: «Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն արհեստական կերպով է միացել Հայաստանում տարեցտարի առավել ընդլայնվող ֆրանկոֆոն շարժմանը: Սակայն իրականում դա ընդամենն աղիթ էր: Բանն այն է, որ Արվեստի ինստիտուտի գիտական առաջնահերթություններից է հայ ժողովրդի՝ այլ ժողովուրդների հետ ունեցած մշակութային առնչությունների ուսումնասիրությունը, և արժեքավոր հետազոտություններ են իրականացվել և իրականացվում, մասնավորապես, հայ-ռուսական, հայ-ֆրանսիական, հայ-իտալական, հայ-իսպանական, հայ-վրացական, հայ-թուրքական, հայ-իրանական և հայ-արաբական գեղարվեստական, երաժշտական, թատերական և ճարտարապետական առնչությունների ուսումնասիրության ուղղությամբ», – նշեց Ա. Ասատրյանը:

Գիտական կոնֆերանսի մասնակիցներին ուղղված իր ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս *Յուրի Սուվարյանը*, մասնավորապես, նշեց. «Հայ-ֆրանսիական մշակութային կապերը դարերի պատմություն ունեն, և այսօր էլ այդ կապերն ինտենսիվ զարգանում են: Առաջին հայը Ֆրանսիայում հայտնվել

* Ներկայացվել է 23. IV. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

է դեռևս 591 թվականին: 1855 թվականին լույս տեսավ Ֆրանսիայում առաջին հայերեն պարբերականը՝ «Արևելք»-ը: Ընդհանուր առմամբ, մինչ այսօր Ֆրանսիայում հրապարակված հայերեն պարբերականների թիվն անցնում է 215-ից: Ի սկզբանե հայ-ֆրանսիական մշակութային կապերը կրել են անհատական բնույթ: Ֆրանսիայում են սովորել և ստեղծագործել շատ հայ անվանի գործիչներ՝ Գրիգոր Զոհրապ, Սիամանթո, Ստեփան Աղաջանյան, Հակոբ Գյուրջյան և այլք: Իսկ երբ մենք ունեցանք պետականություն, այդ մշակութային կապերը սկսեցին կրել արդեն միջպետական բնույթ: 1949 թ. ստեղծվել է Ֆրանսահայ մշակութային միությունը, որը մինչ օրս ակտիվ գործում է: Որպեսզի մշակութային կապերը տարբեր երկրների, տարբեր ժողովուրդների հետ ամուր լինեն, և մենք հաղորդակցվենք ու մասնակից դառնանք համաշխարհային մշակույթի զարգացմանը, պետք է ձգտենք ամրապնդել մեր պետականությունը, իսկ մշակույթը պետականության կարևոր գործիքներից է», – ասաց Յու. Սուվարյանը:

Կոնֆերանսն ուներ ինքնատիպ առանձնահատկություն՝ Պատվո հյուրն էր Հովհաննես Չեքիջյանը: Քանի որ արվեստն ու արվեստագիտությունը՝ որպես արվեստի ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն, փափուկ ուժ և մշակութային դիվանագիտության կարևոր բաղադրիչ են, ուստի որոշվել էր, որ յուրաքանչյուր կոնֆերանս ունենա իր Պատվո հյուրը՝ հայ կամ օտարազգի գիտնական կամ արվեստի գործիչ, ով իր գործունեությամբ նպաստել է հայ-ֆրանսիական մշակութային կապերի ամրապնդմանը, զարգացմանը և/կամ ուսումնասիրությանը:

Ինչպես ասվեց, առաջին կոնֆերանսի Պատվո հյուրը ՀՀ ազգային հերոս, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանն էր, ում անվարան կարելի է անվանել հայ-ֆրանսիական երաժշտական առնչությունների լեգենդար խորհրդանիշ: Մաեստրոն իր բարձրագույն երաժշտական կրթությունն ստացել է Փարիզում, ուսանել աշխարհահռչակ դիրիժոր Ժան Ֆուրնեի դասարանում, որպես երաժիշտ ու դիրիժոր ձևավորվել ֆրանսիական երաժշտական միջավայրում, հետագայում՝ իր կատարողական գործունեության ընթացքում, Հայաստանում և ողջ աշխարհում պրոպագանդել ֆրանսիական վոկալ-սիմֆոնիկ երաժշտությունը, իսկ Ֆրանսիայում ներկայացրել հայ խմբերգային ու վոկալ-սիմֆոնիկ երաժշտությունը:

Կոնֆերանսն սկսվեց «Հեկտոր Բեռլիոզի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունները Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ» զեկուցումով, որն արխիվային վավերագրերի, ժամանակի մամուլի արձագանքների և 1969 թ. մարտի 5-ին Լենինգրադում Ֆիլիարմոնիայի Դ. Դ. Շոստակովիչի անվան Մեծ համերգասրահում, Հայաստանի պետական երգչախմբի և Լենինգրադի ֆիլարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ (ներառական խոսքը՝ Յուլիան Վայնկոպի) կայացած համերգի ձայնագրության ուսումնասիրության հիման վրա ես պատրաստել էի հատուկ այս նպատակով: Մաեստրո Չեքիջյանի ղեկավարությամբ, հայկական կապելլայի և տարբեր սիմֆոնիկ նվագախմբերի կատարմամբ Հայաստանում և Խորհրդային Միությունում առաջին անգամ հնչել ու համերգային կենսագրություն են ստացել Բեռլիոզի «Ռեքվիեմ»-ը, “Te Deum”-ը և «Ռոմեո և

Ջուլիետ» դրամատիկ սիմֆոնիան: Ձեկուցմանս մեջ կենտրոնացա Բեռլիոզի «Ռեքվիեմի» (1837) չեքիջանական մեկնաբանության վրա: «Ռեքվիեմը» (կամ «Մեռելոց պատարագը», ինչպես նախընտրում էր անվանել հեղինակը) «ուղեկցել է» Հովհաննես Չեքիջանին իր համերգային գործունեության ողջ ընթացքում՝ 1967 թ. մինչև 2025 թվականը. հնչել է 38 անգամ՝ այդ թվում 18 քաղաքներում՝ Երևան, Մոսկվա, Լենինգրադ, Կիև, Մինսկ, Քիշնև, Թբիլիսի, Ռիգա, Վիլնյուս և այլն: Հայաստանում և Խորհրդային Միությունում առաջին անգամ այս ստեղծագործությունը հնչել է հենց Չեքիջանի կատարմամբ: Ամենուրեք մեծ հաջողությամբ կատարելով այդ բարդագույն ստեղծագործությունը՝ Չեքիջանը «Ռեքվիեմը» մատուցել է որպես հսկայական ծայնային որմնանկար: Օգտագործելով հարյուրավոր երգիչների և ընդլայնված նվագախմբի (այդ թվում՝ լրացուցիչ փողային խմբերի) ռեսուրսները՝ նա ստեղծել է տարածական հնչողություն, որն ունկնդրին ցնցել է իր հզորությամբ, հատկապես “Dies irae” և “Tuba mirum” հատվածներում: Չնայած ստեղծագործության ահռելի ծավալներին՝ Չեքիջանը խուսափել է «աղմկոտ» էֆեկտներից: Նրա մեկնաբանության մեջ առանձնակի նրբությամբ են հնչել քնարական մասերը: Նա հասել է ծայրահեղ ճշգրտության, որտեղ հսկա երգչախումբը հանկարծ հնչում է շատ մեղմ, գրեթե կամերային ձևով՝ ընդգծելով Բեռլիոզի երաժշտության հոգեբանական խորությունը: Մատուցող, հետևելով Բեռլիոզի մտահղացմանը, «Ռեքվիեմը»-ը ներկայացրել է ոչ թե որպես կրոնական-եկեղեցական ծես, այլ որպես աշխարհիկ հերոսական դրամա: Նրա ղեկավարմամբ երաժշտությունը հնչում է որպես ծոն՝ ուղղված մարդկային ոգուն, հերոսությանը և հիշատակին: Դա ոչ թե մահվան առջև խոնարհում է, այլ կյանքի և պայքարի փառաբանում:

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին վաստակաշատ գիտնականներ ու երիտասարդ հետազոտողներ Հայաստանից՝ բացառապես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Ֆրանսիայից, Լիբանանից և Չինաստանից:

Առավոտյան նիստում (համանախագահներ՝ Աննա Ասատրյան, Արարատ Աղասյան) արվ. թ. Մովսես Ծիրանի-Հերգելյանը (Լիբանան) ներկայացրեց ֆրանսահայ նկարիչներ Լևոն Մուրադովի, Էդմոն Քիրազի և Ժան Գազանջանի ստեղծագործական դիմանկարները:

Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող, ճարտ. թ. Անուշ Տեր-Մինասյանի «Օգյուստ Շուազին և հայկական ճարտարապետությունը» զեկուցումը նվիրված էր ֆրանսիացի հայտնի ճարտարագետ և ճարտարապետ Օգյուստ Շուազիի գլխավոր աշխատություններից մեկին՝ «Ճարտարապետության պատմություն» երկհատոր ծավալուն ուսումնասիրությանը, որտեղ գիտնականն անդրադարձել է հայկական ճարտարապետությանը, հայ վարպետների ստեղծած թաղերին, գմբեթներին ու այլ կոնստրուկտիվ տարրերի, ինչպես և դեկորատիվ հարդարանքին: Նա մեծ նշանակություն է տվել նաև ճարտարապետական հիմնական սկզբունքների տարածման ուղիներին: Ա. Տեր-Մինասյանի դիտարկմամբ՝ «Չնայած այն տարիներին ընդունված կարծիքին, թե հայկական ճարտարապետության ակունքները սկիզբ են առնում այլ երկրներից, Շուազին փաստում է, որ Հայաստանում դրանք վերափոխվել ու զարգացել են՝

վերածվելով ինքնուրույն արվեստի, որն իր հերթին էական ազդեցություն է ունեցել այլ երկրների ճարտարապետական զարգացման վրա»:

Արվ. թ. *Շուշան Զոհրաբյանը* (Ֆրանսիա) «Վարդգես Սուրենյանցի ստեղծագործությունը՝ Սեն-ժերմեն-լ'Օսերրուա եկեղեցին, որպես հայ-ֆրանսիական մշակութային երկխոսության արտահայտություն» զեկուցման մեջ անդրադարձավ Վ. Սուրենյանցի «Սեն-ժերմեն-լ'Օսերրուա» (1897) ստեղծագործությանը՝ այն դիտարկելով գոթական ճարտարապետության նկատմամբ վերածնվող հետաքրքրության շրջանակում և ընդգծելով ակադեմիական ռեալիզմի, իմպրեսիոնիզմի և գոթական վերածննդի գաղափարների փոխհարաբերությունը:

Արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի գիտաշխատող, արվ. թ., դոցենտ *Գոռ Վանյանը* «Արևմտահայ թատրոնի հետագիծը Գառնիկ Ստեփանյանի «Ֆրանսահայ թատրոն» աշխատության էջերում» զեկուցման մեջ քննության առավ XX դարի նշանավոր թատերագետ, արվեստագիտության դոկտոր Գ. Ստեփանյանի «Ակնարկներ սփյուռքահայ թատրոնի պատմության» երկհատորյակի առաջին հատորը, որը նվիրված է ֆրանսահայ թատրոնի ձևավորմանն ու զարգացմանը (1923–1970): 1982 թ. հրատարակված աշխատությունը, որը ներկայացնում է ֆրանսահայ թատերական կյանքն իր առաջատար դեմքերով, խաղացանկով, ստեղծագործական ուղղություններով և մշակութային միջավայրով, հայ-ֆրանսիական թատերական առնչությունները վավերացնող եզակի ուսումնասիրություն է, կարևոր ինչպես հայ-ֆրանսիական միջմշակութային հարաբերությունների լուսաբանման, այնպես էլ հայ թատերագիտական մտքի զարգացման տեսանկյունից: Գ. Վանյանը նշեց, որ Գ. Ստեփանյանը, վերլուծելով թատերական դեմքերի գործունեությունը, խաղացանկը և ժամանակի քննադատների արձագանքները, ցույց է տալիս, որ ֆրանսահայ թատրոնը շարունակությունն է կեսդարյա պատմության անցած, իր նկարագիրը ճշտած արևմտահայ թատրոնի և գործել է գրեթե նույն խաղացանկով, նույն արևմտահայ լեզվով, գրեթե նույն ուժերով, որոնց մեծ մասը խորհրդային կարգերի հաստատումից հետո տեղափոխվել է Հայաստան, հանդես եկել Սունդուկյանի անվան թատրոնում՝ արևելահայ դերասանների հետ կողք կողքի: «Գառնիկ Ստեփանյանի «Ֆրանսահայ թատրոն» աշխատությունը հայ թատրոնի պատմության ուշագրավ էջերից է, հազվագյուտ աշխատանք, որի ուսումնասիրությունը բացահայտում է ոչ միայն հեղինակի թատերագիտական հայացքները, այլև հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունների նշանակությունը ազգային բեմարվեստի զարգացման գործում», – նկատեց զեկուցողը:

Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. *Ռուզան Սարյանը* «Ֆրանսերենի իմացությունը Մարտիրոս Սարյանի կյանքում» բանախոսության մեջ ընդգծեց, որ Մարտիրոս Սարյանի արխիվում պահվող 1911 թ. ֆրանսերեն գրված ծոցատետրը, ֆրանսերեն նրան ձոնված Մայա Կյուլիլիե-Կուդաշովա-Ռոլլանի բանաստեղծությունները և նկարչի անձնական գրադարանի ֆրանսալեզու գրքերի ուսումնասիրումը վկայում են, որ նա բավականին լավ է տիրապետել ֆրանսերենին: Սարյանն իր հետ Փարիզից բերել է ֆրանսիացի հեղինակների՝ Հայաստանին և հայերին նվիրված գրքեր, որոնք տպագրվել են XIX

դարի վերջին և ընդգրկում են բացառիկ հետաքրքրություն ներկայացնող լուսանկարներից արված կլիշեներ: Գրքերից մեկի վրա կան Սարյանի կողմից իրեն անձանոթ բառերի հայերեն թարգմանությունները, ինչը վկայում է, որ նա ընթերցել է այն, և նրա ֆրանսերենի բառապաշարը եղել է հարուստ: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Սարյանի՝ ֆրանսերենի ուսուցչուհու՝ պոետ Մայա Կյուվիլիե-Կուդաշովա-Ռոլլանի անձը: «Մեր այս ուսումնասիրությունը մի նոր բացահայտում է, որը մինչ օրս անհայտ փաստերով է լրացնում Սարյանի կապը Ֆրանսիայի հետ», – եզրակացրեց բանախոսը:

Արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ., դոցենտ *Անուշ Ասլիբեկյանը* «Դրամատուրգիական ռեգիդենցիան որպես ժամանակակից ֆրանկոֆոն թատրոնի նոր համագործակցային մոդել Հայաստանում» զեկուցման մեջ ներկայացրեց 2025 թ. Հայաստանում անցկացված «Թէատրոն» կատարողական արվեստների առաջին ֆրանկոֆոն փառատոնի շրջանակում իրականացված դրամատուրգիական ռեգիդենցիայի փորձը՝ այն դիտարկելով որպես ժամանակակից թատրոնում ստեղծագործական համագործակցության և միջմշակութային փոխազդեցության արդիական ձևաչափ: Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնում կազմակերպված ռեգիդենցիան ղեկավարել է ֆրանսիացի դրամատուրգ, դերասանուհի և ռեժիսոր Նատալի Ֆիլիոնը՝ հայ դրամատուրգներ Անի Առաքելյանի և Անուշ Ասլիբեկյանի մասնակցությամբ: Ստեղծագործական աշխատանքի արդյունքում համահեղինակված պիեսի հիման վրա իրականացվել է փորձարարական ներկայացում ժամանակակից իմերսիվ թատրոնի սկզբունքներով՝ համադրելով խոսքը, լուսանկարչական պատկերաշարը, կենդանի իմպրովիզացիոն երաժշտությունը, բեմանկարչական լուծումները և հանդիսատեսի ներգրավվածությունը: Ստեղծված պիեսը և դրա հիման վրա Ն. Ֆիլիոնի բեմադրած փերֆորմանսն արտացոլում են ժամանակակից կատարողական արվեստներին բնորոշ միջարվեստային միտումները և բազմաշերտ գեղարվեստական մտածողությունը: Ա. Ասլիբեկյանը դրամատուրգիական ռեգիդենցիան վերլուծեց որպես ստեղծագործական փորձի փոխանակման, մշակութային համագործակցության և նոր թատերական արտահայտչամիջոցների ձևավորման միջավայր՝ ցույց տալով միջազգային արվեստային նախագծերի տեղայնացման ազդեցությունը արդի հայկական թատրոնի զարգացման գործընթացի վրա:

Երեկոյան նիստում (համանախագահներ՝ Մարգարիտա Քամալյան, Մարտին Հարությունյան) Քասլիքի Սուրբ Հոգի համալսարանի մշտական դասախոս և Երաժշտական բարձրագույն ուսումնասիրությունների բաժնի վարիչ, երաժշտագիտության դոկտոր, պրոֆեսոր *Եղուարդ Թորիկեանը* (Լիբանան) «Ձոյգ մը ժողովրդականացած երգեր որպէս Հայ-ֆրանսական մշակութային առընչութիւն» զեկուցման մեջ լուսաբանեց պատմության ընթացքում առավելապես մասսայական-ժողովրդական ազդեցություն ունեցած հայ-ֆրանսիական երաժշտական առնչությունները՝ երկու երգերի տեքստային և մեղեդային համեմատական քննարկման միջոցով: Առաջինը ուշ միջնադարում Ներսես Շնորհալու «Զարթիր, փառք իմ» երգի ակնառու նմանությունն է ֆրանսիացիների շրջանում տարած-

ված մի ժողովրդական երգի եղանակին: Երկրորդը XIX դարում սփյուռքահայության համար նվիրական մաղթերգ դարձած հանրահայտ «Կիլիկիա» երգն է, որը ֆրանսիական հայրենասիրական մի երգի բնագրի հայերեն թարգմանությունն է:

Սուչժոուի համալսարանի հետդոկտորանտ հետազոտող, արվ. դ. *Անի Մարգարյանը* (Չինաստան) «Դարավերջյան Փարիզը՝ որպես ամերիկահայ նկարիչ Հովսեփ Փուշմանի գեղագիտական ոճի ձևավորման աղբյուր» զեկուցման մեջ ներկայացրեց Հ. Փուշմանի ստեղծագործական վաղ շրջանի քննադատական վերաբերմունքը՝ ընդգծելով, որ հենց Փարիզն էր այն միջավայրը, որտեղ ձևավորվել է նրա գեղարվեստական ինքնությունը: Բանախոսն առաջ քաշեց այն թեզը, որ այդ ձևավորումը բաղկացած էր երկու փոխկապակցված գործընթացներից. նախ՝ ակադեմիական կրթությունը ժյուլիան ակադեմիայում, ինչը նկարչին ներառեց տվյալ ժամանակաշրջանում գերիշխող ճապոնիզմի և օրիենտալիստական գեղագիտության շրջանակներում, և ապա՝ ինտեգրումը փարիզահայ մտավորական սփյուռքին, որը ներկայացված էր Արշակ Չոպանյանի «Անահիտ» հանդեսի շուրջ համախմբված շրջանակով: Վերականգնելով Փուշմանի փարիզյան ձևավորման համատեքստը՝ սույն հետազոտությունը վերաիմաստավորում է Փուշմանի արվեստը: Ա. Մարգարյանի դիտարմամբ՝ չինական հնությունների նրա հայտնի բեմադրական լուծումները (*mise-en-scène*) դեկորատիվ էկզոտիզմից վերածվում են փարիզյան միջնորդությամբ ձևավորված միստիկ սիմվոլիզմի բարդ ձևի: Սա արվեստագետին դասում է այն տրանսատլանտյան շրջանակի վարպետների շարքին, ովքեր, հենվելով ակադեմիական կրթության վրա, ստեղծեցին ամերիկյան նատյուրմորտի ինքնատիպ ավանդույթը:

Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ. *Լիլիթ Արտեմյանը* «Հայ-ֆրանսիական երաժշտական առնչությունները 21-րդ դարում. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի օրինակով» զեկուցման մեջ առաջին անգամ ներկայացրեց հայ-ֆրանսիական փոխգործակցության կարևոր ուղղություններից մեկի՝ միջմշակութային երկխոսության զարգացման գործում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ներդրումը:

Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գիտաշխատող, արվ. թ. *Գայանե Պողոսյանի* «Ֆրանսիացի հետազոտողները և Ուրարտուն» զեկուցումը նվիրված էր Ուրարտուի (Վանի թագավորություն, մ. թ. ա. IX–VI դդ.) պատմության ուսումնասիրության գործում կարևոր դերակատարում ունեցած ֆրանսիացի հետազոտողներին: Բանախոսի գնահատմամբ՝ ֆրանսիացիների կողմից Ուրարտուի ուսումնասիրությունը հին Մերձավոր Արևելքի մշակույթների այլ համատեքստում սկսվել է դեռևս XIX դարում և շարունակվում է առ այսօր: Ֆրանսիացի մասնագետների ուրարտագիտական որոշ հետազոտություններ ունեն առանցքային կարևորություն ոչ միայն պատմության, այլև ուրարտական կրոնի ու արվեստի բացահայտման գործում:

Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ., դոցենտ *Մարտին Հարությունյանը* «Ֆրանսիայի Օվերն–Ռոն–Ալպ շրջանի Հայ Առաքելական եկեղեցիները» զեկուցման մեջ տեղային ուսումնասիրությունների, արխիվային նյութերի հետազոտության արդյունքում բացահայտեց, թե

ինչպես են հայկական եկեղեցաշինական ավանդույթները ներդաշնակվում ֆրանսիական տեղական ճարտարապետական միջավայրին՝ ձևավորելով յուրահատուկ մշակութային երկխոսություն: Միաժամանակ, իրականացված քարտեզագրումը լրացնում է այս ոլորտում առկա տեղեկատվական բացը և կարևոր հիմք ստեղծում Ֆրանսիայում հայկական ճարտարապետական ժառանգության փաստագրման, պահպանման և հետագա ուսումնասիրությունների համար:

Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի կրտսեր գիտաշխատող, արվ. թ. *Ռուզաննա Միքայելյանը* «Շառլ Ազնավուրի կերպարը Հայաստանի մոնումենտալ քանդակագործության մեջ» զեկուցման շրջանակում քննության առավ ֆրանսահայ աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում տեղադրված մոնումենտալ քանդակները՝ անդրադառնալով դրանց ոճական, հորինվածքային ու ճարտարապետական լուծումներին, ինչպես նաև քանդակների ստեղծման պատմությանը՝ զուգահեռներ տանելով Շառլ Ազնավուրի՝ այլ երկրներում կանգնեցված արձանների հետ:

Կոնֆերանսը եզրափակվեց Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ. *Մարգարիտա Քամայանի* «Գրիգոր Շլյանի ստեղծագործական գործունեության փարիզյան շրջանը» զեկուցումով, որտեղ առաջին անգամ փորձ արվեց համակողմանիորեն ամբողջացնել և հայ-ֆրանսիական առնչությունների համատեքստում ներկայացնել իտալահայ ականավոր նկարչի կյանքի և ստեղծագործության փարիզյան շրջանը (1926–1933):

«Հայ-ֆրանսիական մշակութային կապերի պատմությունից» միջազգային գիտական առաջին կոնֆերանսը Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակում կազմակերպված բազմաթիվ միջոցառումների շարքում միակն է իր գիտական ուղղվածությամբ և նշանակությամբ: Կոնֆերանսի արդյունքները դարձան կարևոր քայլ հայ արվեստագիտության առաջընթացի գործում:

Վստահ ենք, որ գիտական այս նորաստեղծ ու շարունակական միջոցառումը կդառնա հուսալի ու հեղինակավոր գիտական հարթակ, որտեղ հայ-ֆրանսիական (հետագայում աստիճանաբար կընդգրկվեն մյուս ֆրանսախոս երկրները ևս) մշակութային կապերի իրենց հետազոտությունների արդյունքները պարբերաբար կներկայացնեն ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, ինչպես նաև Հայաստանի ու արտերկրի վաստակաշատ գիտնականներն ու երիտասարդ հետազոտողները:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, երաժշտության բաժնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ XIX–XXI դարերի հայ երաժշտության պատմություն և տեսություն: Հեղինակ է 12 գրքի և 272 հոդվածի: ORCID: 0009-0009-0814-4870.

anna.asatryan@arts.sci.am